

**«Մխիթար Սեբաստացի» կրթահամալիր
Արվեստ**

6-րդ դասարան

Ինչպես նշված է կրթահամալիրի »Ուսումնական պլանի պարզաբանումներ«- ում՝

26. «Արվեստ» առարկան ընդգրկում է կինոդիտում, թատրոն, թանգարաններ և վիրտուալ ցուցադրություններ, ծեփ, տոնի կազմակերպում և երաժշտություն:

Ուստի՝

Սովորողները կհաճախեն մշակութային օջախներ՝ պատկերասրահներ, թանգարաններ, թատրոններ, համերգասրահներ, կինոթատրոններ, գրադարաններ, կժամոթանան Երևան քաղաքում գտնվող հուշարձանների պատմությանը, մեր քաղաքի եկեղեցիների պատմությանը, այն մշակութային օջախներին, որոնք գործում են մեր քաղաքում: Կժամոթանան նաև մեր քաղաքում գործող այլ ազգերի մշակույթին:

Էքսկուրսիաների, ճամփորդությունների միջոցով սովորողներին պետք է հաղորդակից դարձնել հայ ազգային արվեստի պատմությանը, մեր քաղաքում գործող պատմամշակութային օջախներին:

Նպատակը՝

- Սովորողների համակողմանի և ներդաշնակ զարգացումը:
- Սովորողներին հաղորդակից դարձնել հայ արվեստի պատմությանը:
- Արվեստի տարբեր տեսակների մասին գիտելիքների հաղորդումը:
- Սովորողներին ծանոթացնելու արվեստի բազմաժանր
- ստեղծագործություններին:
- Սովորողների գիտական աշխարհայացքի ձևավորումը:
- Անցյալի մշակութային ժառանգության տիրապետումը, ժամանակակից արվեստի նկատմամբ ցուցաբերած վերաբերմունքը:
- Սովորողներին հաղորդակից դարձնել մեր երկրում գործող այլ ազգերի մշակույթին:

Խնդիրներն են՝

- Սովորողների գեղագիտական զգացմունքների, պահանջմունքների բավարարումը, գեղագիտական հայացքների ձևավորումը:
- Սովորողների մեջ գեղագիտական ճաշակի ձևավորումն ու զարգացումը:
- Արվեստի տարբեր բնագավառում նրանց հետաքրքրությունների ու հակումների բավարարումը:
- Կյանքում, բնության մեջ և արվեստում գեղեցիկն ընկալելու, գնահատելու կարողությունը:
- Ճանաչողական և ստեղծագործական ընդունակությունների զարգացումը:

Դասավանդման մեթոդիկան

Առարկայի դասավանդումն անհնարին է պատկերացնել արվեստի վերաբերյալ զուտ տեսական գիտելիքներ հաղորդելով: Այն պետք է զուգորդվի արվեստի և բնության ստեղծագործություններն ընկալելու և հուզական ներգործություն ունենալու միջոցով:

Նախքան որևէ պատմամշակութային օջախ հաճախելը՝ սովորողների հետ համացանցում տվյալ վայրի վերաբերյալ ուսումնասիրություններ ենք կատարում, վիտուալ ցուցադրություններ: Օրինակ, եթե պետք է այցելենք Գաֆեւճեան արվեստի կենտրոն, նախապես սովորողները տեղեկացվում են և սկսում են տվյալ վայրի վերաբերյալ տեղեկատվություն հավաքել: Հիմնականում յուրաքանչյուր պատմամշակութային օջախ ունի իր առանձին կայքը, որի միջոցով ստույգ տեղեկատվություն ենք ստանում :

<http://www.cmf.am/>

<http://www.gallery.am/hy/>

<http://toumanian.am>

<http://www.charents.am/>

<http://www.isahakyanmuseum.am/>

<http://www.akhachaturianmuseum.am/>

<http://www.spendiaryanmuseum.am/>

<http://www.saryan.am/>

<http://www.historymuseum.am>

<http://www.yerevan.am/am/allmuseums/museums-of-yerevan/>

Սովորողներն իրենց հետազոտական աշխատանքների մասին տեղեկատվությունը ամսվա կտրվածքով տեղադրում են իրենց բլոգում :

Սովորողները հաճախում են մշակութային օջախներ՝ պատկերասրահներ, թանգարաններ, թատրոններ, համերգասրահներ, կինոթատրոններ, զբոսայգիներ, ծանոթանում Երևան քաղաքում գտնվող հուշարձանների պատմությանը, մեր քաղաքի եկեղեցիների պատմությանը, այն մշակութային օջախներին, որոնք գործում են մեր քաղաքում:

Առարկան ընդգրկում է նաև այցելություններ մեր քաղաքում գործող այլ ազգերի մշակութային օջախներ, որը հնարավորություն կտա սովորողներին զուգահեռներ անցկացնելու հայ և այլ ազգերի մշակույթների միջև:

Ուսումնական տարվա յուրաքանչյուր ամիս, յուրաքանչյուր դասարան ունի մշակութային օջախներ այցելելու իր ցանկը:

Սովորողների գնահատումը կատարվում է ըստ իրենց կատարած հետազոտական աշխատանքների, բլոգում և ենթակայքում հրապարակած նյութերի, այցելությունների ժամանակ ակտիվ մասնակցության հիման վրա:

6-րդ դասարանում սովորողների 2014-15 ուս. տարվա պլան **Սեպտեմբեր**
Ծանոթացում առարկայի հետ:

Արվեստի տեղն ու դերը մեր կյանքում:

Արվեստի տեսակները, փոխազդեցությունը:

Ամփոփում

Հոկտեմբեր

Երաժշտության տեսակները

Երաժշտական ժանրերը

Երաժշտության ունկնդրում

Ամփոփում

Նոյեմբեր

Թանգարան

Պանթեոն

Երաժշտության ունկնդրում

Ամփոփում

Դեկտեմբեր

Լուսիի թանգարան

Մադամ Տյուսոյի թանգարան

Երաժշտության ունկնդրում

Ամփոփում

Հունվար

**Ձմեռային ուսումնա-հետազոտական ճամբար. այցելություն պատմա-մշակութային օջախներ
Կիսամյակի ամփոփում**

Փետրվար

Կոմիտասի թանգարան-ինստիտուտ

Ալեքսանդր Սպենդիարյանի տուն-թանգարան

Արամ Խաչատրյանի տուն-թանգարան

Երաժշտության ունկնդրում

Մարտ

Երևան քաղաքի պատմության թանգարան

Հայաստանի ազգային պատկերասրահ

Գաֆեսճյան արվեստի կենտրոն

Ամփոփում

Ապրիլ

Հայաստանի ժողովրդական արվեստի թանգարան

Երևանի ժամանակակից արվեստի թանգարան

Ռուսական արվեստի թանգարան

Ամփոփում

Մայիս

Հովհաննես Թումանյանի տուն-թանգարան

Եղիշե Չարենցի տուն-թանգարան

Ավետիք Բասիակյանի տուն-թանգարան

Ամփոփում

Հունիս

Ամառային ու սումնա-հետազոտական ճամբար. այցելություն պատմա-մշակութային օջախներ
2-րդ կիսամյակի ամփոփում